ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 24.07.2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՄ ՌՈՒԴՈԼՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԳ-26044-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև նաև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Դավիթ Վարդիկյանի, խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Թամարա Բաղդասարյանի, Լիլիթ Ղազանչյանի, Ցոլակ Մարգարյանի, Էմին Բեգլարյանի, Արսեն Հարությունյանի, Դավիթ Մելքոնյանի, Ռուբեն Հակոբյանի և Պավել Գյուլումյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-26044-2-Ա որոշման բողոքարկումը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Պալատի գլխավոր հաշվապահի 05.02.2026թ. տեղեկանքի համաձայն՝ **փաստաբան Արամ Ռուդոլֆի Հովհաննիսյանի** (արտոնագիր թիվ 564) անդամավճարի ընդհանուր պարտքը կազմել է 355.000 (**երեք հարյուր հիսունհինգ հազար**) **ՀՀ դրամ**, **որից վերջին** 18 **ամիսների համար՝** 2024**թ**. **հունիսից** 2025**թ**. **նոյեմբեր ամիսը ներառյալ**, **կազմում է** 90.000 **ՀՀ դրամ**: **Միաժամանակ վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը**:

Պալատի նախագահի 23.02.2026թ. թիվ 141-Ա/ԿԳ-26044 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Փաստաբանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի

վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

Պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետև՝ Հանձնաժողով**), 24.07.2026 թվականի թիվ ԿԳ-26044-2-Ա որոշմամբ (**այսուհետև՝ Որոշում**) Փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման համար:

Փաստաբանը Որոշման դեմ 10.08.2026թ. բողոք է ներկայացրել:

2. **ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ- ԿԳ-26044-2-Ա որոշման էությունը.**

Հանձնաժողովը Որոշմամբ նշել է հետևյալը.

«(...) Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում ամրագրվել են անդամավճար չվճարելու համար փաստաբանների նկատմամբ կարգապահական տույժի ընտրության համար որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում կոնկրետ կարգապահական գործով Հանձնաժողովը կարող է կիրառել ավելի մեղմ կամ ավելի խիստ կարգապահական տույժի՝ «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» տույժի տեսակ:

Տվյալ դեպքում Օրենքի և Կանոնագրքի համապատասխան կարգավորումներով անդամավճարի վճարման պարտականության երկարատև չկատարման համար նախատեսված է «**փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում**» կարգապահական տույժ կիրառելու հնարավորություն:

Միաժամանակ, «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» տույժերը կիրառվում են այն դեպքում, երբ փաստաբանը մինչև Հանձնաժողովի որոշման կայացումը պարտքն ամբողջությամբ մարել է և որոշման կայացման օրվա դրությամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանը կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշմամբ արձանագրված անդամավճարի պարտքն ամբողջությամբ չի մարել, ուստի առավել մեղմ տույժերի կիրառման համար օրենքով նախատեսված պայմանները բացակայում են: Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ կատարված խախտմանը համարժեք կարգապահական տույժը փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցումն է:

Այս համատեքստում, Հանձնաժողովը հաշվի է առնում նաև այն փաստը, որ Պատասխանողն ըստ էության գոյացրել է ավելի քան 18 ամսվա պարտք (այդ թվում՝ չի կատարել Պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման կայացման օրվա դրությամբ վերջին վեց ամիսների մասով անդամավճար վճարելու պարտականությունը), չի վճարել հերթական ամսվա անդամավճարը, ինչպես նաև

ամբողջությամբ չի մարել Պալատի նախագահի 141-Ա/ԿԳ-26044 որոշման կայացման պահի դրությամբ առկա իր անդամավճարի պարտքը:

Ի հավելումն նշվածի՝ Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Պատասխանողի կողմից անդամավճարի չվճարման արդյունքում չի ապահովվում Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով[1] ամրագրված Պալատի գույքային երաշխիքը, ինչն իր հերթին խոչընդոտում է Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Պալատի խնդիրների իրականացմանը: Մասնավորապես՝ Օրենքով նախատեսված է Պալատի յուրաքանչյուր հերթական տարվա բյուջեի կազմման և հաստատման ընթացակարգ: Պալատի խորհուրդը հաստատում է հերթական տարվա բյուջեն:

Պալատի տարեկան բյուջեն նրա գործունեության համար անհրաժեշտ եկամուտների և ծախսերի նախապես պլանավորման ֆինանսական հիմքն է:

Նշված միջոցների հաշվին ապահովվում է Պալատի՝ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված խնդիրների իրականացումը, այդ թվում՝ փաստաբանների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, փաստաբանների արտոնագրման գործընթացի, մասնագիտական ուսուցման և վերապատրաստման կազմակերպումը, Օրենքի, Պալատի կանոնադրության և Կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, փաստաբանության հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը նպաստելը: Հետևաբար, անդամավճար վճարելու պարտականությունը չի հանդիսանում սոսկ Պալատի հանդեպ առանձին դրամական պարտավորություն: Դրա պատշաճ և ժամանակին կատարումը Պալատի տարեկան բյուջեով նախատեսված եկամուտների ձևավորման և օրենքով վերապահված խնդիրների շարունակական իրականացման անհրաժեշտ նախապայմաններից է:

Փաստաբանի կողմից անդամավճարի երկարատև չվճարումը, որը սույն դեպքում կազմում է գրեթե 6 տարի՝ խաթարում է Պալատի բնականոն գործունեությունը և ֆինանսական կանխատեսելիությունը:

Այս առումով անդամավճարի վճարման պարտականության խախտմանը համարժեք կարգապահական արձագանքն ունի նաև ընդհանուր կանխարգելիչ նշանակություն. այն կոչված է ապահովելու փաստաբանական համայնքի անդամների կողմից Պալատի գործունեության ֆինանսավորմանը հավասար և պատասխանատու

---

[1] **Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *փաստաբանների պալատի գույքը ձևավորվում է փաստաբանների անդամավճարներից, փաստաբանների հավակնորդների մուտքի վճարներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներից: Փաստաբանների պալատի անդամավճարները մուծվում են փաստաբանների պալատի խորհրդի սահմանած չափով և կարգով՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:*

մասնակցությունը և կանխելու այնպիսի վարքագծի ձևավորումը, որը կարող է վտանգել Պալատի՝ օրենքով սահմանված խնդիրների բնականոն և շարունակական իրականացումը: Ուստի քննարկվող վարքագիծը չի սահմանափակվում Պալատի նկատմամբ դրամական պարտավորության չկատարմամբ, այլ կարող է բացասաբար անդրադառնալ Պալատի գործունեության ֆինանսական հիմքի և դրա միջոցով ողջ փաստաբանական համայնքի ընդհանուր շահերի ապահովման վրա:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում կատարված խախտման ու օրենսդրորեն սահմանված այլ հանգամանքներին համարժեք միակ տույժի տեսակն է հանդիսանում արտոնագրի գործողության դադարեցումը:

Բացի այդ, Պալատը փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որին անդամակցությունից բխում են ոչ միայն իրավունքներ և մասնագիտական երաշխիքներ, այլև Օրենքով ու Պալատի ներքին իրավական ակտերով սահմանված պարտականություններ: Պահպանելով Պալատի անդամի կարգավիճակը և դրանից բխող իրավունքները՝ Փաստաբանն երկարատև ժամանակահատվածում չի կատարել անդամակցությունից բխող հիմնական գույքային պարտականությունը: Արդյունքում վերջինս, շարունակելով օգտվել Պալատի անդամությունից բխող իրավունքներից և երաշխիքներից, ավելի քան 6 տարի չի կատարել Պալատի ընդհանուր խնդիրների իրականացման ֆինանսական ապահովմանը մասնակցելու՝ Օրենքով և Պալատի ներքին իրավական ակտերով սահմանված իր պարտականությունը՝ դրսևորելով Պալատի անդամի պարտականությունների կատարման նկատմամբ հետևողականորեն անբարեխիղճ վերաբերմունք: Հարկ է նաև նշել, որ Փաստաբանը պարբերաբար իրազեկվել է անդամավճարի պարտավորության մասին՝ իր կողմից Պալատին տրամադրված հեռախոսահամարներին ուղարկված SMS հաղորդագրությունների միջոցով: Բացի այդ, անդամավճարի գծով պարտավորության և առկա պարտքի չափի վերաբերյալ տեղեկատվությունը շարունակաբար արտացոլված է եղել Փաստաբանի անձնական էջում:

Ամփոփելով վերոգրյալը, Հանձնաժողովը Փաստաբանի նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառել է «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» տույժի տեսակը:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Փաստաբանը 10.08.2026թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովը կարգապահական տույժ կիրառելու մասին որոշում կայացնելիս 20.04.2026թ. ՀՀ փաստաբանների պալատին ներկայացրած իր բացատրությունից մեջբերել է միայն, իր բնորոշմամբ, Հանձնաժողովին «հոգեհարազատ» հատվածը, որը վերաբերում է

Փաստաբանի հետևյալ հայտարարությանը. «Իսկ ինձ համար իմ հոր առողջությունն ավելի կարևոր էր, քան Ձեր անդամավճար վճարելը: Ինչ ուզում եք՝ Ձեր կարգապահական վարույթով իմ հանդեպ կայացրեք»: Փաստաբանի պնդմամբ՝ Հանձնաժողովը նշված արտահայտությանը տվել է այնպիսի նշանակություն, որը լրացուցիչ հիմնավորում է հանդիսացել իր նկատմամբ «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու համար:

Փաստաբանի պնդմամբ՝ Հանձնաժողովն անտեսել է նույն բացատրությամբ իր կողմից վկայակոչված մի շարք այլ հանգամանքներ: Մասնավորապես, Փաստաբանը հայտնել է, որ 2021թ. հոկտեմբերի 21-ին Պալատից ստացել է կարճ հաղորդագրություն այն մասին, որ 31.10.2021թ. դրությամբ իր անդամավճարի պարտքը կազմում է 155.000 ՀՀ դրամ՝ 31 ամսվա անդամավճարի չափով: Փաստաբանը նշել է, որ այդ ժամանակահատվածում վերջին անգամ անդամավճար վճարել է 2019թ., իսկ նշված հաղորդագրությունը ստանալուց հետո՝ 17.11.2021թ., դիմել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին՝ հայտնելով, որ չի հրաժարվում պարտքը մարելուց և առաջարկելով այն մարել 2021թ. դեկտեմբերից մինչև 06.07.2024թ. ընկած ժամանակահատվածում՝ իր կողմից առաջարկված ժամանակացույցով: Փաստաբանի պնդմամբ՝ նշված դիմումը Պալատի կողմից թողնվել է անպատասխան:

Ինչ վերաբերում է 31.10.2021թ.-ից հետո ընկած ժամանակահատվածին, ապա Փաստաբանը հայտնել է, որ այդ ընթացքում հոգացել է իր հոր բուժման հետ կապված ծախսերը:

Ելնելով վերոգրյալից՝ Փաստաբանը խնդրել է վերացնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 24.07.2026թ. թիվ ԿԳ-26044-2-Ա որոշումը, որով իր նկատմամբ կիրառվել է «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժ:

4. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Փաստաբանի անդամավճարի ընդհանուր պարտքը 05.02.2026թ. դրությամբ կազմել է **355.000 (երեք հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների համար՝ 2024թ. հունիսից 2025թ. նոյեմբեր ամիսը ներառյալ, կազմել է 90.000 ՀՀ դրամ: Միաժամանակ վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը:** *Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 05.02.2026թ. տրամադրված տեղեկանքով:*

2) 24.07.2026թ. դրությամբ Փաստաբանը անդամավճարի պարտքը չի մարել:

Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի 24.07.2026թ. տեղեկանքով:

5. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Օրենքի 39.10-**րդ հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝*

1) առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի

կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:

Կանոնագրքի 9.1.3 **ենթակետի համաձայն՝** ***փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում****, բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:* ***Սույն ենթակետում նշված վճարումն ամբողջությամբ կատարելու դեպքում****, Պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառում է «նկատողություն» կամ «խիստ նկատողություն»:*

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի կայացրած որոշումը լիովին բխում է վերոնշյալ կարգավորումներից: Մասնավորապես, վերոգրյալ իրավակարգավորումներից հետևում է, որ օրենսդիրը անդամավճարի գծով առնվազն տասնութ ամսվա պարտքի առկայության և հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում նախատեսել է առանձնահատուկ կարգապահական պատասխանատվության միջոց՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Միաժամանակ, 39.10-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված բացառությունը գործում է միայն այն դեպքում, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանը ամբողջությամբ մարել է պարտքը և Կարգապահական հանձնաժողովի որոշման կայացման օրը Պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի: Հետևաբար, եթե նշված բացառության պայմանները առկա չեն, ապա Կարգապահական հանձնաժողովը տվյալ խախտման համար իրավասու է կիրառել օրենքով հատուկ նախատեսված տույժը՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցումը:

Տվյալ դեպքում Փաստաբանը բողոքով դժգոհություն է հայտնել այն հանգամանքից, որ Հանձնաժողովը հաշվի չի առել իր կողմից 17.11.2021 թվականին ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին ներկայացված դիմումը, որով հայտնել է, որ պարտքը մարելուց չի

հրաժարվում և առաջարկել է 2021 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 06.07.2024 թվականը պարտքը մարել իր կողմից առաջարկված ժամանակացույցով: Այս կապակցությամբ Խորհուրդը գտնում է, որ նշված հանգամանքը չի կարող ազդել Հանձնաժողովի որոշման իրավաչափության վրա: Մասնավորապես, սույն կարգապահական վարույթի շրջանակներում քննության առարկա են հանդիսացել 2024 թվականի հունիսից մինչև 2025 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Փաստաբանի կողմից անդամավճարի պարտավորությունների չկատարման հետ կապված հանգամանքները: Հետևաբար, 17.11.2021 թվականին ներկայացված դիմումը և դրանում արտահայտված՝ պարտքը հետագայում մարելու վերաբերյալ առաջարկը ինքնին չեն վկայում այն մասին, որ Փաստաբանը սույն կարգապահական վարույթի առարկա հանդիսացող ժամանակահատվածում կատարել է անդամավճարի վճարման իր պարտավորությունները կամ ամբողջությամբ մարել է առկա պարտքը: Ավելին, պարտքի վճարման վերաբերյալ առաջարկի ներկայացումը չի կարող նույնացվել պարտավորության փաստացի կատարման հետ: Օրենքի 39.10-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված բացառության կիրառման համար օրենսդիրը պահանջում է ոչ թե պարտքը մարելու մտադրության կամ վճարման վերաբերյալ առաջարկի առկայություն, այլ օրենքով սահմանված համապատասխան ժամկետում պարտքի ամբողջական և փաստացի մարում:

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում հաստատվել է, որ Փաստաբանը օրենքով սահմանված համապատասխան ժամկետում պարտքը չի մարել: Ընդ որում, պարտքի չմարման հանգամանքը Փաստաբանը ընդունել է ինչպես կարգապահական վարույթի ընթացքում, այնպես էլ սույն բողոքարկման վարույթի շրջանակներում: Հետևաբար, տվյալ դեպքում բացակայում է Օրենքով նախատեսված բացառության կիրառման համար անհրաժեշտ հիմնական նախապայմանը՝ պարտքի ամբողջական փաստացի մարումը սահմանված ժամկետում:

Ինչ վերաբերում է Փաստաբանի այն պնդմանը, որ 31.10.2021 թվականից հետո ընկած ժամանակահատվածում ինքը հոգացել է իր հոր բուժման հետ կապված ծախսերը, ապա Խորհուրդը գտնում է, որ նշված հանգամանքը, ինքնին, չի կարող հիմք հանդիսանալ Հանձնաժողովի որոշումը վերացնելու համար: Խորհուրդը հաշվի է առնում, որ Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը, իսկ տույժ կիրառելիս ենթակա են գնահատման նաև փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը և փաստաբանին բնութագրող այլ ուշադրության արժանի հանգամանքները:

Միաժամանակ, ըստ Փաստաբանի ներկայացրած տվյալների՝ նրա հայրը մահացել է 28.01.2026 թվականին, մինչդեռ դրանից հետո ևս Փաստաբանը շարունակել է չկատարել անդամավճարի վճարման պարտականությունը, այդ թվում՝ իր նկատմամբ 23.02.2026

թվականին կարգապահական վարույթ հարուցվելուց հետո և մինչև Հանձնաժողովի որոշման կայացումը: Հետևաբար, հոր բուժման հետ կապված ծախսերի վերաբերյալ փաստարկը չի կարող դիտարկվել որպես անդամավճարի վճարման պարտականության հետագա շարունակական չկատարումն արդարացնող հանգամանք:

Խորհուրդը հաշվի է առնում նաև, որ Փաստաբանը կարգապահական վարույթի ընթացքում ներկայացրած բացատրությամբ նշել է, որ իր համար հոր առողջությունն ավելի կարևոր է եղել, քան անդամավճարի վճարումը, և որ իր նկատմամբ կարգապահական վարույթի շրջանակներում կարող է կայացվել ցանկացած որոշում: Նշված արտահայտությունն ինքնին պատասխանատվության առանձին հիմք չի հանդիսանում, սակայն գործի մյուս հանգամանքների հետ համակցված բնութագրում է Փաստաբանի վերաբերմունքը անդամավճարի վճարման իր պարտականության և դրա չկատարման հնարավոր հետևանքների նկատմամբ:

Միաժամանակ, Փաստաբանի կողմից անդամավճարի հետագա վճարումները կատարվել են արդեն Հանձնաժողովի որոշման կայացումից հետո, մինչդեռ Օրենքի 39.10-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված բացառության կիրառման համար պարտքը պետք է ամբողջությամբ մարված լիներ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը: Հետևաբար հետագայում կատարված վճարումները չեն կարող հետադարձորեն փոխել Հանձնաժողովի որոշման կայացման պահին առկա փաստական և իրավական իրավիճակը:

Այսպիսով, Խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովի կողմից սույն գործով իրականացվել է պատշաճ քննություն, կիրառելի իրավական նորմերը ճիշտ են մեկնաբանվել և կիրառվել, Հանձնաժողովը հանգել է իրավաչափ եզրահանգումների և կայացրել իրավաչափ Որոշում, որը ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում ենթակա չէ վերացման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11-**րդ հոդվածի** 8-**րդ մասի** 1-**ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության** 16.26-**րդ կետի պահանջներով**, **Խորհուրդը**՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի*** *24.07.2026* ***թվականի «Փաստաբան Արամ Ռուդոլֆի Հովհաննիսյանին (արտոնագիր՝*** *թիվ* *564)* ***կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու***

մասին» թիվ ԿԳ-26044-2-Ա որոշման դեմ Արամ Ռուդոլֆի Հովհաննիսյանի կողմից 10.08.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. ***Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 24.07.2026 թվականի թիվ ԿԳ-26044-2-Ա որոշումը:***

3. ***Հանձնարարել խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Դավիթ Վարդիկյան**

10 սեպտեմբերի 2026թ.
թիվ ԿԳ/25-Ա
ք. Երևան